ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026թ. մայիսի 7-ին, ժամը՝ 15:00-ին

Ք.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ

հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2026թ. մայիսի 6-ին, ժամը՝ 17:00-ին

ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցները

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/
1	1	GAZ 3102	Թող. տարին՝ 2003թ., գրանցման համարանիշը՝ 484 LU 01, նույն. համ.՝ XTH31020031191734 , թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ , գույնը՝ ԱՎԱՆՏՅՈՒՐԱ/ՍԵՎ/:	ք.Երևան, Քըրք Քըրքորյան փող 16	600 000	437 400	43 800	11 400
2	2	GAZ 3102-121	Թող. տարին՝ 2005թ., գրանցման համարանիշը՝041 LU 01 , նույն. համ.՝ X9631020061312975, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ , գույնը՝ ԱՎԱՆՏՅՈՒՐԱ/ՍԵՎ/:		600 000	437 400	43 800	11 400
3	3	GAZ 3110-101	Թող. տարին՝ 2003թ., գրանցման համարանիշը՝ 049 LU 01, նույն. համ.՝ XTH31100031148229, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ , գույնը՝ ԱՐԾԱԹԱԳՈՒՅՆ:		700 000	510 300	51 100	13 200
4	6	GAZ 310:2-121	Թող. տարին՝ 2006թ., գրանցման համարանիշը՝501 LU 01 , նույն. համ.՝ X9631020061342167, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ , գույնը՝ ԱՎԱՆՏՅՈՒՐԱ/ՍԵՎ/:		700 000	510 300	51 100	13 200
5	7	GAZ 3102-121	Թող. տարին՝ 2005թ., գրանցման համարանիշը՝ 256 LU 01, նույն. համ.՝ X9631020051283182, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ, գույնը՝ ԱՎԱՆՏՅՈՒՐԱ/ՍԵՎ/:		700 000	510 300	51 100	13 200
6	8	ՎԱԶ-21102-119	Թող. տարին՝ 2004թ., գրանցման համարանիշը՝095 LU 01 , նույն. համ.՝XTA21102040779448 , թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ, գույնը՝ ՀԱՐԴԱԳՈՂԻ ՃԱՆԱՊԱՐՀ:		500 000	364 500	36 500	9 600
7	9	GAZ 3102-751	Թող. տարին՝ 2007թ., գրանցման համարանիշը՝ 226 LU 01, նույն. համ.՝ ' X9631020071372445, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ , գույնը՝ ԱՎԱՆՏՅՈՒՐԱ/ՍԵՎ/:		700 000	510 300	51 100	13 200
8	10	GAZ 3102-501	Թող. տարին՝ 2007թ., գրանցման համարանիշը՝ 176 LU 01, նույն. համ.՝ X9631020071372061, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ, գույնը՝ԱՎԱՆՏՅՈՒՐԱ/ՍԵՎ/:		800 000	583 200	58 400	14 200
9	11	GAZ 31105-120	Թող. տարին՝ 2006թ., գրանցման համարանիշը՝254 LU 01 , նույն. համ.՝ X9631105061344024, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ, գույնը՝ ՄԱԼԱԽԻՏ:		600 000	437 400	43 800	11 400
10	12	GAZ 3102-121	Թող. տարին՝ 2005թ., գրանցման համարանիշը՝ 224 LU 01 , նույն.համ.՝X9631020051282003, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ , գույնը՝ ԱՎԱՆՏՅՈՒԻՐԱ/ՍԵՎ/:		700 000	510 300	51 100	13 200
11	15	GAZ 311000	Թող. տարին՝ 2003թ., գրանցման համարանիշը՝ 035 LU O1, նույն. համ.՝XTH31100031191162 , թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ, գույնը՝ ՍԵՎ:		300 000	218 700	21 900	6 000
12	16	IRAN KHODRO SOREN T U5 1.6	Թող. տարին՝ 2014թ., գրանցման համարանիշը՝ 251 LU 01, նույն. համ.՝ NAACD1FFXEF805020, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ, գույնը՝ ՍՊԻՏԱԿ :		930 000	678 000	67 800	15 700
13	17	IRAN KHODRO SOREN T U5 1.6	Թող. տարին՝ 2014թ., գրանցման համարանիշը՝052 LU O1 , նույն. համ.՝ NAACD1FF4EF805028, թափքի տեսակը՝ ՍԵԴԱՆ, գույնը՝ ՍՊԻՏԱԿ :		950 000	692 600	69 300	15 900
14	19	VAZ 21214	Թող. տարին՝ 2004թ., գրանցման համարանիշը՝414 LU O1 , նույն. համ.՝XTA21214041758083 , թափքի տեսակը՝ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ, գույնը՝ ՍՊԻՏԱԿ :		1 000 000	729 000	72 900	16 400
15	20	ԶԱԶ-11055751	Թող. տարին՝ 2006թ., գրանցման համարանիշը՝ 993 UL 65, նույն. համ.՝ Y6D11055760039249, թափքի տեսակը՝ ՖՈՒՐԳՈՆ, գույնը՝ ՍՊԻՏԱԿ :		800 000	583 200	58 400	14 200

* *Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝* ***«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):***
**** Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) մուծել են նախավճար և Կազմակերպչի կողմից ստացել մասնակցի վկայական (տոմս):***
* *Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:*
* *Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:*
• *Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցողները լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում* ***ք.Երևան, Քըրք Քըրքորյան փող., 16 հասցեում, նախապես զանգահարելով (041) 655-168 հեռախոսահամարով:, յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 (բացառությանբ՝ ժամը 13:00-14:00):Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:***

Աճուրդի մասնակցության պայմանները՝

- Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ ***սեփականության իրավունք****, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել* ***անհրաժեշտ փաստաթղթեր****:*

Աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- Ֆիզիկական անձանց համար՝ նույնականացման քարտի պատճենը կամ ***անձնագրի պատճենը****:*
- Իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գույք ձեռք բերելու մասին ընկերության ընդհանուր ժողովի որոշումը ***և կանոնադրությունը,***
- Նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, ***պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը),*** *մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության* ***թիվ 900018002171****, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝* ***<u>աճուրդի նախավճար</u>****՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լոտի հերթական համարը:* ***Նախավճարը հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում:***
- Մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, ***պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը),*** *մուտքագրման հաշիվն է՝*
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության ***թիվ 900018002981,*** *ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝* ***<u>աճուրդի մասնակցության վճար</u>****՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լոտի հերթական համարը:* ***Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:***
- Հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):
* ***Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս)****:*

Աճուրդի մասնակից չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

- ***Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին****:*
- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագիրի պատճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):
- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:
- ***Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:***

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

- Աճուրդի մասնակիցների ***անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի*** *առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև* ***լիազորությունները հաստատող փաստաթղթերը****:*
- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:
- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը:
Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:
- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:
- Լոտի (լոտերի) վաճառքից հետո աճուրդավարի կողմից հաղթող համարված մասնակիցը ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

Լոտի գնի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝

- Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հինսապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում՝ արձանագրության ստորագրման օրվանից սկսած ***10 օրվա*** *ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով:*
- Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, ոնդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

- Սահմանված հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:

- Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:

- Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:

- Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

**** Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63-32 հեռախոսահամարով:***

Ծանուցում.

«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.

1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի
մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:
Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:
2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:
3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 283 հոդված.

1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը՝
պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝
1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ
2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝
պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

****Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:***